

ՀՀ Արագածոտնի մարզպետ Դավիթ Գևորգյանը ընդունել է Հայ օգնության ֆոնդի Հայաստանյան մասնաճյուղի փոխտնօրեն Մարգարիտ Փիլիպոսյանին և բժշկական ծրագրերի ղեկավար Համբարձում Սիմոնյանին

23.01.2019

ՀՀ Արագածոտնի մարզպետ Դավիթ Գևորգյանը ընդունել է Հայ օգնության ֆոնդի Հայաստանյան մասնաճյուղի փոխտնօրեն Մարգարիտ Փիլիպոսյանին և բժշկական ծրագրերի ղեկավար Համբարձում Սիմոնյանին: ՀՀ-ի Հայաստանյան մասնաճյուղի փոխտնօրեն Մարգարիտ Փիլիպոսյանը ներկայացրել է Արագածոտնի մարզում իրականացրած աշխատանքները և առաջիկա ծրագրերը:

Հատուկ անդրադարձ է կատարվել երեխաների թերսնուցման, առողջ ֆիզիկական և մտավոր զարգացման խնդիրներին: Երեխաներին բալանսավորված սննդով ապահովելու համար ՀՀ-ի նախաձեռնությամբ վերանորոգվել է Ապարանի թիվ 2 ավագ դպրոցի ճաշարանը, որի արդյունքում 1-4-րդ դասարանների 252 երեխա կարող է օգտվել ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի շրջանակներում իրականացվող «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրից:

2018 թվականի սեպտեմբերից մեկնարկել է «Երեխաների սնուցման և առողջության բարելավման» ծրագիրը, որի իրականացման համար ընտրվել են Արագածոտնի մարզի Մելիքայուղ համայնքը, Ալագյազ և Ծաղկահովիտ խոշորացված համայնքները:

Ծաղկահովիտ և Նորաշեն բնակավայրերի մանկապարտեզներին տրամադրվել է խոհանոցային գույք և տեխնիկա, բարելավվել է սննդակարգը, մանկապարտեզների տնօրենների, բուժքույրերի և խոհարարների համար կազմակերպվել են դասընթացներ:

Համագործակցելով դոնոր կազմակերպությունների հետ՝ սոցիալապես անապահով ընտանիքների առողջական խնդիրներ ունեցող երեխաներին ցուցաբերվել է խորհրդատվություն, ըստ անհրաժեշտության կատարվել են վիրահատություններ:

Առողջապահական ոլորտի մասնագետների, մայրերի և խնամատարների համար կազմակերպվում է «Երեխաների սնուցում և զարգացում» թեմայով հանրային կրթական և մասնագիտական վերապատրաստման դասընթացներ:

Մարզպետ Դավիթ Գևորգյանը կարևորել է ՀՀ-ի կողմից իրականացրած ծրագրերը, դրանք առավել նպատակային և արդյունավետ դարձնելու համար առաջարկել է համագործակցել ավելի սերտ և պատրաստակամություն է հայտնել խնդիրները լուծել համատեղ:

-Առկա միջոցներով ավելի արդյունավետ աշխատանքի և կառավարման արդյունքում կարելի է ավելի մեծ արդյունք գրանցել: Խնդիրներին պետք է տրվի ինստիտուցիոնալ լուծումներ: Բարեգործական ծրագրերը շատ կարևոր են, սակայն ակնհայտ է, որ դրանք չեն կարող կրել մշտական բնույթ: Պետք է ուսումնասիրել այդ ծրագրերի կառուցվածքը, մեխանիզմները, վերլուծել արդյունքները և հաջողված օրինակներով հնարավոր է նոր պետական ծրագրեր մշակել,-ասաց մարզպետը: